ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ,

ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/3356/02/24 ք. Երևան
27 Մայիսի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Արտուշ Ավագյանի, քննության առնելով թիվ ԵԴ2/3356/02/24 քաղաքացիական գործով ըստ հայցի <<Ագաստ>> ՍՊԸ-ի ընդդեմ <<Գորիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի՝ «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի կողմից կայացված՝ «Ագաստ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույց պահանջելու մասին հարցը

ՊԱՐԶԵՑ

<<Ագաստ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչների կողմից հայցադիմում է ներկայացվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ <<Գորիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի՝ «Ագաստ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու

պահանջի մասին:
Հայցադիմումն էլեկտրոնային եղանակով մուտքագրվել է 30.04.2024թ.-ին և նույն օրը մակագրվել է դատավոր Արտուշ Ավագյանին:
Հայցադիմումը վերադարձվել է, որը թույլ տրված խախտումները վերացնելուց հետո՝ 22.05.2024 թվականին, էլեկտրոնային եղանակով կրկին ներկայացվել է դատարան և նույն օրը մակագրվել է դատավոր Արտուշ Ավագյանին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Առաջին ատյանի դատարանը վարույթ է ընդունում ներկայացված հայցադիմումը, եթե առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանները հատուկ հայցային վարույթներն իրականացնում են սույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն, այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն ենթաբաժնի դրույթներով:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:
Օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Դատարանը միևնույն գնման գործընթացին վերաբերող՝ սույն գլխով նախատեսված վեճերի վերաբերյալ իր վարույթում քննվող գործերը միացնում է մեկ վարույթում:
Դատարանը, ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, արձանագրում է, որ այն վերադարձնելու կամ ընդունումը մերժելու հիմքեր առկա չեն և գտնում է, որ այն ենթակա է վարույթ ընդունման, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով գնումների հետ կապված վեճերով վարույթների համար նախատեսված առանձնահատկությունները, Դատարանը գտնում է նաև, որ միաժամանակ անհրաժեշտ է Պատասխանողից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ապացույցները:
Դատարանն արձանագրում է նաև, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ նախագահությամբ դատավոր Արտուշ Ավագյանի, վարույթում է քննվում թիվ ԵԴ2/3388/02/24 քաղաքացիական գործն ըստ հայցի <<Ագաստ>> ՍՊԸ-ի ընդդեմ <<Գորիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի՝ կողմերի միջև 30.01.2024 թվականին կնքված թիվ «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2/5» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որպիսի պարագայում, Դատարանն արձանագրում է, որ թե՛ թիվ ԵԴ2/3356/02/24, թե՛ թիվ ԵԴ2/3388/02/24 քաղաքացիական գործերը վերաբերվում են միևնույն գնման գործընթացին, այն է թիվ «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2/5» ծածկագրով գնման գործընթացին, ուստի անհրաժեշտ է նշված երկու քաղաքացիական գործերը միացնել մեկ վարույթում:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200-րդ, 201-րդ, 202-րդ, 234.5-րդ, 234.6-րդ հոդվածներով

ՈՐՈՇԵՑ

1. <<Ագաստ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ <<Գորիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի՝ «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի կողմից կայացված՝ «Ագաստ» ՍՊ

ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2. Գործը քննել հատուկ հայցային վարույթի կարգով:

3. Պատասխանող «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից պահանջել ՀՀ «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2/5» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված վերջինիս տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

4. Որոշման նախորդ՝ 3-րդ, կետում նշված ապացույցները պատասխանողի կողմից պետք է ներկայացվեն սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

5. Եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 17.06.2024թ., այն հրապարակելով www.court.am դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

6. Թիվ ԵԴ2/3356/02/24 և թիվ ԵԴ2/3388/02/24 քաղաքացիական գործերը միացնել թիվ ԵԴ2/3356/02/24 քաղաքացիական գործին և քննել մեկ վարույթում:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ:

Դատավոր՝ Արտուշ Ավագյան

Digitally signed by
ARTUSH AVAGYAN 2601940050
Date: 2024.05.27 17:47:26 mID

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am